

15643

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՃԱՌ
ՀԱՄԿ_(Բ) Կ XVIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

321.8

Կ-15

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳԴԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԲԾՏԱԲԱԳՁՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1939

15 JAN 2010
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ



Մ. ԿԱԼԻՆԻՆ

26 SEP 2006

321.8

4-15

26



ՃԱՌ
ՀԱՄ Կ(Բ)Կ XVIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 թ. մարտի 16-ին

321.8
4-15

ՊԵՏՀՐԱՏ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

16 MAY 2013

2641
39

М. КАЛИНИН
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Ընկերներ, հեղափոխական մարքսիստները միշտ յեղել են պետություն, վորպես հասարակությունը կոմունիստական սկզբունքներով վերակառուցելու հիմնական լծակի, վճռական և հետևողական կողմնակիցներ: Պետություն այդ դերն ու նշանակությունը Լենինն ու Ստալինը պաշտպանել են մարքսիզմի բազմաթիվ թշնամիների դեմ մղած անողոք պայքարում, սկսած անարխիստներից և վերջացրած ֆաշիզմի բուխարինական վարձկաններով: Մեր կուսակցությունն իր հեղափոխական գործունեությունը առաջին քայլերից բանվոր դասակարգին դաստիարակել և իշխանություն համար պայքարելու վողով և նրան ներշնչել և պրոլետարական պետություն ստեղծելու, շահագործող դասակարգերին ճնշելու և վոչնչացնելու նպատակով, կոմունիզմ կառուցելու նպատակով իր պետությունն ստեղծելու անհրաժեշտության միտքը:

Դուք, հավանորեն, հիշում եք 1917 թվի հունիսին խորհուրդների Համառուտատանյան Առաջին Համագումարում տեղի ունեցած պատմական եպիզոդը: Այնտեղ ժամանակավոր կառավարության ընդհանուր քաղաքականության մասին ղեկուցումով հանդես յեկավ մենշևիկյան հայտնի պարագլուխ Ծերեթելին և հայտարարեց, վոր «Ռուսաստանում չկա մի քաղաքական կուսակցություն, վորն ասեր—սովեք իշխանությունը մեր ձեռքը, հեռացեք, մենք կգրավենք ձեր տեղը: Այդպիսի կուսակցություն—պնդում եր նա—Ռուսաստանում չկա»: Դրան, ինչպես դուք գիտեք, Լենինը տեղից նետեց իր ապշեցուցիչ ռեպլիկան՝ «Կա»:

Լենինի այդ ռեպլիկան բավականաչափ պարզորոշու-

թյամբ ցույց տվեց կոմունիստական կուսակցութեան վերաբերմունքը դեպի իշխանութիւնը և պետութիւնը:

Պատմութիւնը լիովին արդարացրեց ու հաստատեց Լենինի դերքը, բոլշևիկների դերքը:

Ընկեր Ստալինն իր թեորոտիկական աշխատութիւններով եւ ավելի առաջ շարժեց պետութեան վերաբերյալ հարցի մարքսիստական-լենինյան մշակումը: Ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի աշխատանքի մասին ներկա Համագումարում նոր ավանդ եւ պետութեան վերաբերյալ մարքսիստական-լենինյան ուսմունքի մեջ:

Պետութեան վերաբերյալ ընկեր Ստալինի զադափարների թեորոտիկական կողմը յետ թողնում եմ թեորոտիկներին,—նրանք աշխատելու շատ բան կունենան: Յետ կանգ կառնեմ միայն այդ հարցի զործնական կողմի վրա: Վերջ եւ այդ զործնական կողմը: Այդ հարցին հակիրճ կերպով կարելի չեր այսպես պատասխանել,— յեթ իրոք ուզում եք կոմունիզմ կառուցել, ապա ամեն կերպ ամրապնդեցեք սոցիալիստական պետութիւնը: (Յերկարատե ծափահարութիւններ): Այսպես եւ նայում մեր կուսակցութիւնը դործի վրա և, հենց զրա համար, սկսած Հոկտեմբերյան Մեծ հեղափոխութեան հաղթանակի առաջին օրից, մեր կուսակցութիւնը և ամբողջ խորհրդային ժողովուրդը, Լենինի և Ստալինի ղեկավարութեամբ, ամրացրել են և ամրացնում են սոցիալիստական պետութիւնը:

Յետ այդ կապակցութեամբ չեմ սկսի խորանալ մեր սոցիալիստական պետութեան պատմութեան մեջ. առենք, զրա առանձին կարիքն եւ չկա: Հիշեցնեմ միայն, վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան նոր Սահմանադրութիւնը, վորը պատմութեան մեջ իրավամբ մտավ Ստալինյան Սահմանադրութիւն անունով, արտացոլում եւ յերկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսա-

կան ամենախոր տեղաշարժերը և օրենսդրականօրեն ձեւակերպում ե խորհրդային ժողովուրդի նվաճումները: Դրա հետ միասին Ստալինյան Սահմանադրութեան ընդունումը նշանակում ե եւ ավելի ամրապնդել սոցիալիստական պետութիւնը:

Սահմանադրութիւնը հիմնական օրենքն ե, վորը մեզ մոտ ուսումնասիրվում ե զպրոցական նստարանից: Պետք ե յենթադրել, վոր այդ օրենքը հայտնի յե յուրաքանչյուր քաղաքացու: Հասարակական և պետական կառուցվածքի հետ միասին, Սահմանադրութիւնը վորոշում ե քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականութիւնները պետութեան մեջ: Ըստ օրենսդրական զադափարների, Սահմանադրութիւնը պետք ե մտնի յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու մտի ու արշան մեջ, վորպէսզի նա իր վարմունքի մեջ ղեկավարվի սոցիալիստական համակցութեան այդ հիմնական կանոններով: Այսպիսով Սահմանադրութիւնը ձեւակերպում և հիմնական օրենսդրական նորմաների հունի մեջ ե մտցնում բաղմամիլիոն մասնահերի զործունեյութիւնը:

Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունք մտցնելը զադանի քվեարկութեամբ, յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու մեջ խթանում ե այն բանի դիտակցութեան զարգացումը, թե նա վոչ միայն իրավունքներ, այլ և պարտականութիւններ ունի, թե նա պետք ե պատասխանատւութիւն զգա իր ընտրած խորհուրդների համար, վերից վար: Այսպիսով ամբողջ խորհրդային ժողովուրդն անմիջականօրեն ներգրավում ե պետական կառավարման մեջ, և զրանով իսկ հսկայական չափով ամրապնդվում ե նաև սոցիալիստական պետականութիւնը:

Նույն նպատակներին—սոցիալիստական պետականութեան ամրապնդմանն ե ծառայում օրենսդրական և գործադիր իշխանութեան սահմանադատումը, գործադիր իշխանութեան վրա մեծ վերահսկողութիւն սահմանելը և իշխանութեան բոլոր օրգանների զործունեյութեան խստիվ վորոշակի օրենսդրական նորմաներ մտցնելը:

Բայց ինձ կարող են ասել—այդ բոլորը հիանալի չէ, բայց այդ միջոցառումները, վորոնց նպատակն է ամրապնդել սոցիալիստական պետականությունը—չէն խանդարի արդյոք ստեղծագործական նախաձեռնություն հայտարարմանը: Յեթե ստեղծագործական նախաձեռնություն ասելով հասկանանք սոցիալիզմից դեպի կոմունիզմ կատարվող անցումն ապահովող նախաձեռնություն, ապա յեռ, առանց վորեն տատանման, պետք է ասեմ—վճ, այդ միջոցառումներն ամենեկին ել չեն խանդարի այդպիսի նախաձեռնություն հայտարարմանը: Ընդհակառակը, սոցիալիստական պետություն որենքների համաձայն ծավալվող նախաձեռնությունը բոլորին առաջ կմղի դեպի կոմունիզմ տանող ճանապարհով, կվկայի այն մասին, վոր խորհրդային աշխատողները բավականաչափ տոգորված են սոցիալիստական պետականության դադափարով: Նա նրանց զգայնությունը կուժեղացնի դեպի խորհրդային ժողովրդի շահերն ու պահանջ-մունքները:

Դրա շնորհիվ ամբողջ խորհրդային ժողովրդի գիտակցություն մեջ ել ավելի ուժեղ կերպով կարմատանա սոցիալիստական պետականության դադափարը և նրա մեջ ել ավելի կզարգանա հայրենասիրությունը դեպի իր սոցիալիստական պետությունը, և դրանով իսկ բոլոր խորհրդային քաղաքացիները սխտեմատիկորեն կնախապատրաստվեն կոմունիստական հասարակության ապագա չգրված որենքների յուրացմանը, վորոնք ժամանակին պետք է սովորություն դառնան:

Դրա համար ել սոցիալիստական պետականության դադափարները պետք է աչքի ընկնող սեղ գրավեն ազիտացիայի ու պրոպագանդայի մեջ, բայց նրանք առանձնապես պետք է պատվաստվեն գործնականորեն, ամենորոյա աշխատանքի ընթացքում: Սոցիալիստական պետականության ամրապնդման ամենաուժեղ միջոցը—այդ որենքների պահպանումն է իշխանություն որդանների, հասարակական կազմակերպությունների և յուրաքանչյուր քաղաքացու կյան-

քի ու գործունեություն ընդ վորտներում: Ահա թե ինչու խորհուրդները, որինակ, կայացնելով իրենց պարտադիր վորոշումները, պետք է ուշադիր հետևեն, վոր դրանք չչեղվեն սոցիալիստական ընդհանուր որենքներից: Այդ վորոշումները պետք է ժամանակին հայտարարվեն ընակչությունը, այսինքն, խստիվ վորոշակի ժամկետներում, ինչպես այդ պահանջում է ընդհանուր որենքը, և այն ժամանակ արդեն կարելի չէ ավելի խիստ պահանջներ ներկայացնել քաղաքացիներին՝ այդ վորոշումները կատարելու իմաստով: Պետք է ասեմ ի միջի այլոց, վոր այդ պարտադիր վորոշումները նույնիսկ ավելի կարևոր դատարարական նշանակություն ունեն, քան կարծում են դրանք ստորագրող վորոշ ընկերները:

Վերջապես, չի կարելի թերագնահատել իշխանություն ներկայացուցիչների, վարչական, դատական և այլ աշխատողների նաև բուն վարմունքը: Յեթե այս կամ այն դեպքում իր վորոշումները մեջ միշտ ձգտի այն բանին, վորպեսզի հենվի որենքի վրա և յեղի նրանից, ապա դրանով իսկ նա կամրապնդի սոցիալիստական որինակնությունը և ընակչությանը հաղորդակից կդարձնի սոցիալիստական պետականությունը:

✱ Զուգընթացաբար պետք է նկատեմ, վոր այդ պայմաններում զգալիորեն կսեղմվի թշնամական աշխատանքի հնարավորությունը մեր յերկրում:

X Ընկերներ, մեզ մոտ դեռ կան մարդիկ, վորոնք մինչև այժմ լիովին չեն հասկացել Սահմանադրության իմաստը: Յես չեմ բերի իմ ձեռքի տակ յեղած զգալի քանակությամբ փաստերը, կլիքցնեմ միայն մեկը, վորը, հավանաբար, հայտնի չէ Համագումարի պատգամավորներին շատերին: ԽՍՀՄ Դերագույն Խորհրդի Նախագահությունը մի շարք անձեր ղիմում են կշտամբելով, վոր մենք չենք կատարում մեր պարտականությունները կազմակերպական-մասսայական աշխատանքի դժով: Այդ ընկերները պարզապես մոռանում են, վոր ԽՍՀՄ-ի Դերագույն Խորհրդի Նախագահության

իրավասութիւնը խառնել վորոշված և Սահմանադրութեամբ,
վորն այդ պարտականութիւնները չի նախատեսում:

Պարզ է, վոր ներկայումս կազմակերպական-մասնաշա-
կան աշխատանքը հիմնականում դրված է կուսակցութեան,
պրոֆմիութիւններին, կոմսոմոլի և մյուս հասարակական
կազմակերպութիւններին վրա: Սակայն այդ ամեններն ել
չի նշանակում, վոր տեղական խորհուրդները, վորպէս իշ-
խանութեան որդաններ, չեն կարող կազմակերպական-մաս-
նաշական աշխատանք կատարել: Բայց նրանց կազմակեր-
պական-մասնաշական աշխատանքը կազմակերպական-մաս-
նաշական աշխատանք չի այդ բառի սովորական իմաստով:
Դուք գիտեք, վոր Խորհուրդները, Գործկոմները չունեն
պրոպագանդայի բաժիններ կամ կազմակերպական-մասնա-
շական բաժիններ, և նրանք հատուկ հատկացումներ չունեն
այդ աշխատանքի համար: Նրանց կազմակերպական-մաս-
նաշական աշխատանքն արտահայտվում է վարչական և
քաղաքական կոնկրետ միջոցառումներով, տնտեսական և
կուլտուրական գործունեութեամբ: Խորհրդային որդանների
ձեռնարկած բոլոր միջոցառումներին պարզաբանումը բնակ-
չութեանը, մասնաւորի ներդրումուն այդ միջոցառումներին
իրադրածման մեջ,—հենց այդ էլ հանդիսանում է Խորհուրդ-
ների մասնաշական աշխատանքը, վորն միջոցով նրանք
պետք է համախմբեն և կազմակերպեն մասնաւորներն: Բայց,
ընկերներ, այդ մասնաշական աշխատանքի հաջողութեան
աներեւակայելի յե առանց կուսակցութեան անմիջական ղե-
կավարութեան և առանց հասարակական կազմակերպու-
թիւններին նրա մեջ ունենալիք մասնակցութեան: Ակնա-
ռու որինակ կարող է ծառայել սոցիալիստական մրցու-
թիւնն ու հարվածաշունթիւնը: Դ՛

Այսպէս ուրեմն, մենք պետք է ամրապնդենք սոցիա-
լիստական պետութեանը: Դրան մեզ պարտավորեցնում է,
ամենից առաջ, արտաքին իրադրութեանը, կապիտալիս-
տական շրջապատումը: Յեթե մեր սոցիալիստական պետու-
թիւնը թույլ լիներ, ապա մեզ, ինչպէս պատկերավոր կեր-

պով ասում է ընկեր Ստալինը—վաղուց «կացահարած» կլի-
նէին:

Ամեն տեղակ խոսակցութիւնները պետութեան «մա-
հացման» մասին՝ սոցիալիստական հասարակութեան կառույց-
ման կազմակցութեամբ, ինձ թվում է, անփափաք մտադրածին
են: Իրականութեան մեջ սոցիալիստական պետութեանը
զարգանում է այնպէս, վոր նրա մեջ վորոշ ֆունկցիաներ
վերանում են, իսկ մյուսները, ընդհանրապէս, ուժեղանում
են: Դրան համապատասխան փոփոխվում են նաև սոցիա-
լիստական պետութեան ձևերը: Որինակ, նախկին անհա-
վասար, անուղղակի ընտրութիւնները փոխարինված են
բոլոր խորհուրդների հավասար և ուղղակի ընտրութիւննե-
րով: Սոցիալիստական հանրային տնտեսութեան աճումը
պահանջեց նոր կոմիսարիստներ ստեղծել: ՎՋԿ-ն վե-
րափոխվեց ՊՖՎ-ի, իսկ այնուհետև՝ Ներքգործողկոմատի:
Միայն կույրը չի տեսնում, վոր այդ վերափոխութիւններն
արտահայտում են նաև ՎՋԿ—ՊՖՎ—ՆԴԺԿ-ի բուն ֆունկ-
ցիաների նշանակալից փոփոխումներ:

Նույնը կարելի յի ասել խորհրդային դատարանի և
դատախազութեան մասին: «Այժմ,—ասաց ընկեր Ստալինը
Համկ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին իր հաշվետու ղե-
կուցման մեջ ներկա Համագումարում,—մեր պետութեան
հիմնական խնդիրը յերկրի ներսում կայանում է տնտեսա-
կան-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչա-
կան խաղաղ աշխատանքի մեջ: Ինչ վերաբերում է մեր բա-
նակին, պատժիչ որդաններին և հետախուզութեանը, ապա
նրանք իրենց սուր ծայրով ուղղված են արդեն վոչ թե դե-
պի յերկրի ներսը, այլ նրանից դեպի դուրս, արտաքին
թշնամիներին դեմ»:

Կարելի յի արդյոք ասել, վոր այժմ մեզ այլևս հար-
կավոր չեն պետութեան այնպիսի ֆունկցիաներ, վորոնց
միջոցով մարդիկ պատժվում են հանրային սոցիալիստա-
կան սեփականութեան նկատմամբ վտանգութեան անեղու-
համար: Յեւ կարծում եմ, վոր վոչ վոք, բացի մեր թշնա-

միներից, այդ բանը չի առի: Ակներեւորեն, պետութեան ֆունկցիաները հանրային սոցիալիստական սեփականութեան, վորպէս մեր հասարակարգի հիմքի, պահպանման և ամրապնդման գծով կարող են մահաւալ միայն այն ժամանակ, յերբ մեզ մոտ յուրաքանչյուր մարդ կաշխատի ըստ ընդունակութեան և կատանա ըստ պահանջմունքի, յերբ գոյութիւնը և համաշխարհային կոյունքները կ'ընդունեն իմաստը, իսկ յիմեւ այն ժամանակ ել դեռ գոյութիւն ունենա կապիտալիստական շրջապատում, ապա կ'պահպանվեն պետութեան այդ ֆունկցիաներն ել, բայց միայն նրանք իրենց ռուր ծալքով արդեն կ'ուղղվեն վոչ թե դեպի յերկրի ներքը, այլ նրանից դեպի դուրս, արտաքին թշնամիներէ դեմ:

Կարելի չի յենթադրել, վոր սոցիալիստական պետութեան ժամանակակից գրված մի շարք որեւքներէ պահպանումը ժամանակի ընթացքում կ'ըստանա ընդհանուր սովորութիւն: Որինակ, աշխատանքի կարգապահութեան որեւքն այնպէս կ'արմատանա մարդկանց գիտակցութեան մեջ, վոր նրա ամեն մի խախտումը հասարակական կարծիքի կողմից կ'ընտելի վորպէս մարդկային անհորմալութիւն և այդ հասարակական կարծիքը արտադրութեան կազմավորւիչներին ավելի ուժեղ կ'ընդի, քան նույնիսկ ներկայիս գրված որեւքը:

Լենինն ասում եր. «... յերբ քոլոքը սովորեն կ'աւազարել և սկսեն իսկապէս ինքնուրույն կերպով կ'աւազարել հասարակական արտադրութիւնը, ինքնուրույն կերպով իրագործել ձրիակերներէ, աղաներէ, խաբերաններէ և դրանց նման «կապիտալիզմի արտադրիաները պահպանողներէ» հաշվառումն ու վերահսկողութիւնը, այն ժամանակ այդ համաժողովրդական հաշվառումից և վերահսկողութիւնից խուսափելն անխուսափելիորեն կ'ըստանա այնպիսի անհամատարի որեւ գծով, այնպիսի հազվագյուտ բացառութիւն, կ'ընթացակցվի, համարաբար, այնպիսի արագ և լուրջ պատժով... վոր ամեն մի մարդկային համակեցութեան պարզ

հիմնական կանոնները պահպանելու անհրաժեշտութիւնը շատ շուտով սովորութիւն կ'ըստանա»: Բայց այդ կլինի այն ժամանակ, յերբ կ'սկսվի կոմունիզմի բարձրագոյն փուլը:

«Մինչ այդ,— ասում եր Լենինը,— մինչև վոր կ'սկսվի կոմունիզմի «բարձրագոյն» փուլը, սոցիալիստները խըստագոյն վերահսկողութիւն են պահանջում հասարակութեան կողմից և պետութեան կողմից՝ աշխատանքի չափի և սպառման չափի վրա... Յեւ այնքան ժամանակ դեռեւ կ'մնա պետութեան անհրաժեշտութիւնը, վորը, պահպանելով արտադրութեան միջոցների ընդհանուր սեփականութիւնը, պահպաներ աշխատանքի համասարութիւնը և միջերքի բաժանման համասարութիւնը»:

Այսպիսով միայն սոցիալիստական հասարակութեան պետութիւնը, վորն ունի խորհրդային ժողովրդի ամբողջ տնտեսական, ռազմական և քաղաքական հզորութիւնը, կարող ե կոմունիզմը կ'առուցել: Այդ յեզրակացութեան են մեզ հանգեցնում սոցիալիստական հասարակութեան զարգացման կոնկրետ փաստերը:

Ընկերներ, ընկեր Մոլոտովը պատահականորեն չեւ, վոր այնքան մեծ ուշադրութիւն նվիրեց կոմունիստական հասարակութեան կառուցման ուղիների վերաբերյալ հարցին: Յեւ իրոք, սոցիալիստական պետութեան հզորութիւնը և խորհրդային սահմանների անհրաժեշտ ապահովւածութիւնը մեզ հնարավորութիւն են տալիս կատարելու աստիճանական անցումը սոցիալիզմից կոմունիզմին:

Վերցնենք, որինակ, գյուղացիութիւնը և նրա ուղին դեպի կոմունիզմը: Ներկայումս յուրաքանչյուր կուլտուրական նվաճումը և կենցաղի բարելաւումը խորհրդային գյուղում՝ դարձողի կառուցումը, մանկատան բացումը, փողոցի լուսավորումը, հասարակական ճաշարանի, բաղնիքի կազմակերպումը, կինո-սարքի ստեղծումը և այլն,— այս բոլորը նոր ուղենիշ, նոր քայլ ե դեպի կոմունիզմը: Կապիտալիստական հասարակութեան մեջ նման յերեւոյթները

պատահականութիւնն են և նրանք կալվածատերերի, կուլ-
լակների և քաղաքային բուրժուազիայի ձեռքին մեծ մա-
սամբ ծառայում են վորպես միջոց եւ ավելի ստրկացնելու,
կողոպտելու և ճնշելու գյուղացիներին: Ահա ձեզ դիւրեկ-
տիկա:

Առանձնապես այդ նկատելի յե կոոպերացիայում: Կա-
պիտալիստական հասարակութեան մեջ կոոպերացիան իրեն
խնդիր եր դրել իբր թե բարեկամել իր փայտերերի կեն-
ցաղը: Միքանի ֆանտազիորներ նույնիսկ կարծում էին,
վոր դա սոցիալիզմի սաղմն է: Բայց վերջին հաշիւով այն-
տեղ կոոպերացիան ընկավ կապիտալի ազդեցութեան տակ
և վերասերմից կապիտալիստական կոլեկտիվ ձեռնարկու-
թեան: «Անկառիւած եւ,—ասում և Լենինը,—վոր կոոպերա-
ցիան կապիտալիստական պետութեան իրադրութեան մեջ
հանդիսանում է կապիտալիստական կոլեկտիվ հիմնարկու-
թիւն»:

Մեր կոոպերացիան կապիտալիստականի ուղղակի հա-
կադրութիւնն է: Մեր կոոպերացիայի բնույթը միանգամայն
այլ է, և դրա համար ելնա հանդիսանում է սոցիալիստական
շինարարութեան ողակը: Կոոպերացիայի այդպիսի փոխա-
կերպութիւնը պայմանավորված է այն բանով, վոր մեզ
մոտ սոցիալիստական պետութիւնն է, վորը կոոպերա-
ցիան կապիտալիստական սիստեմի կցորդից փոխարկել է
սոցիալիստական կոոպերացիայի:

Սոցիալիստական պետութիւնը շատ բան է ավել մեր
գյուղացիութեանը:

Գյուղացիութեան զարգացման ուղին կապիտալիզմի
որով մեզ հայտնի չէ: Մենք այդ տեսնում ենք Գերմանիայում
Ֆրանսիայում, Ամերիկայում, Յապոնիայում, Իտալիայում
և այլն: Մի յերկրում ավելի դանդաղ կերպով, մյուսում՝
ավելի արագ կերպով, բայց ամենուրեք գործը գնում է դեպի
մեկ հետևանք—դեպի գյուղացիութեան քայքայում, պառու-
պերիզացիա, մահացում, դեպի գյուղացիութեան, վորպես
դասակարգի, վոչնչացում:

Մեզ մոտ սոցիալիստական պետութիւնը գյուղացիու-
թեանը դուրս է բերել տնտեսական, քաղաքական և կուլ-
տուրական պրոգրեսի լայն ճանապարհը: Սոցիալիստական
պետութիւնը վողի ու շունչ է ավել և բարձրացրել է վնչ
միայն բանվորների ու ինտելիգենցիայի, այլև կոլտնտե-
սային գյուղացիութեան աշխատանքը, այն դարձնելով պատ-
վի, արիութեան և փառքի գործ:

Մեանով եւ, ընկերներ, յես վերջացնում եմ: Անտարա-
կույս, ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկուցումներն
զգալիորեն կհեշտացնեն մեզանից յուրաքանչյուրի աշխա-
տանքը: Մարքսիստական-լենինյան թեորիայի լույսով
ընկեր Ստալինը մեզ համար լուսավորեց առաիճանաբար
կոմունիզմին անցնելու ուղին: Ընկեր Ստալինի դադափա-
րներով դինված, մենք նրա ղեկավարութեամբ առաջ կընթա-
նանք դեպի նորանոր հաղթանակներ՝ կոմունիզմի հաղթա-
նակի համար մղվող պայքարում:

(Ամբողջ դահլիճի յերկարատե, յերկար ժա-
մանակ չլռող ովացիա. բացակայանք յոլեւն եր՝
«Կեցցէ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին
ուռա»):

Հայերեն թարգմ. խմբագիր Վ. Փինաչյան
Տեխ. խմբագիր Հ. Մանվելյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիադիր № Ն—2832, հրատ. № 674

Պատվեր № 80, տիրաժ 8000

Հանձնվել է արտադրության 15/IV 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 23/IV 1939 թ.

Դիւնը 15 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Յերեւան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0199970

44.61.15.4.

М. КАЛАНДЯН

РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП(б)

Армения - Издателство «Азат» - Авторатура
Ереван, 1939